ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 342 – Ա

«ԵՂԵԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՐ ԼԻԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Եղեգի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վ. Ստեփանյանի 14.07.2026թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Եղեգի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Ստեփանյանին 2026 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Եղեգի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դասվար Լիա Թամրազյանին:

3. Վարդան Ստեփանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 20-ից:

14.07.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

Մարզպետին փոխարինող Հ. Հարությունյան

2026թ. հուլիսի 14
Քաղ. Կապան